

Թեան գլխաւոր կէտը այն է որ Քիւրդական լեզուն կը դիմէ
դէպ իր զարգացումն՝ քան անհետացումն :

Գաղով կրօնի ազդեցութեանը, նախնական ժամանակները
Հայերն ու Քիւրդերը ապրած են միեւնոյն գաղափարը, չնայած
վերջերը Հայերու ընդունած Քրիստոնէութեան ու Քիւրդերու
Մահմետականութեանը, այսօր հասարակ ժողովուրդը գեւ
կը պահէ Հայաստանի մէջ հին գաղափարին թողած սովորու-
թիւնները, սովորութիւնները՝ որոնք նոյնն են թէ՛ Հայերուն
և թէ՛ Քիւրդերուն համար :

Արուեստներու ժառանգականութեան մասին, Քիւրդերու
համար չէ կարելի ժառանգականութիւն մը որոնել, որովհետեւ
իրենք եղեր են փախստականներ և իրենց միջավայրը եղած է
լեռը ընդհանրապէս :

Քիւրդերու ունեցած այս ժառանգականութեան մասին,
մենք պիտի խօսինք իրենց մօտիկ անցեալի ու ներկայի կեան-
քի նկարագրութեան մէջ :

Իբր հետեութիւն՝ կարելի է ամփոփում մը ընել այսպէս :
Քիւրդ-նախնինքու կուլտուրական ազդեցութեան են-
թարկուած մեծ մասը հաւանական է որ մնացել է իր նախնա-
կան բնակավայրին մէջ՝ չը նայելով տիրապետողներու փոփոխ-
ուելուն : Յեղական արիւնի, ցեղական լեզուի և ցեղական
կրօնի շուրջ համախմբուելու գաղափարը եղեր է շատ թոյլ :

Նմանապէս ճշմարտութեան մօտ է որ ժամանակի ընթաց-
քին ընդունուած սովորութեամբ մը, ըմբոսաները և փախստա-
կանները պատերազմներու հետեւանքով իբրև գերի կամ իբր
գաղթականութիւն դուրս են եկեր իրենց իսկական բնակավայ-
րերէն ու տարածուել Տիգրիսի ափերը ինչպէս կը նկատեն նա
և օտար պատմիչները :

ՔԻՒՐԴՈ—ՀԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԸՍՏ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Երբ պատմականօրէն ու տնտեսականօրէն ընդունուած կը